



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5884

Ujyungu

Umpu pupu

891.99
u-55

1888

2011

E 2003

Հայր-Մայրի Բնագրաբան

542-3
Ռ-19

ՄՈՒԹ ԽՈՐՀԵՐԻՑ

157
126

Պ Ա Տ Կ Ե Ր

Ն Ե Ր Կ Ա Յ Կ Ե Ա Ն Ք Ի Ց

Գ Ր Ե Ց

Ռ Ա Ծ Ի Դ

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանի

1888


Ա. Բ.

ՄՈՒԹ ԽՈՐՀԵՐԻՑ

ՅՁԻ. 99
Ա-55
Ս

Պ Ա Տ Կ Ե Ր

ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ



Գ Ր Ե Ց

Ռ Ա Շ Ի Դ (Բ. Այլապյան)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանի

1888

ՅՁԻ. 99
Ա-55

Պ Ա Տ Կ Ե Ր

ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Գ Ր Ե Ց

Ռ Ա Շ Ի Դ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանի

1888

2002
A

3656

8478901-6100

930270

8445000-800930

Доз. ценз. Тифлисъ. 27-го Сентября 1888 года.
Тип. М. Варганиянца, Тройц. пер. домъ № 11

11.

Ինչպէս մի արծիւ Սղնախ քաղաքը փռել է իւր թեւերը
բլուրների վրայ եւ իւր սրտես աչքերը դարձրել հե-
ռու հորիզոնի վրայ, ուր երկնքի հետ կպած անցնում
են սառնամանեաց գագաթները՝ Կովկասի ալեղարը շղթան. . .
Նայում է այդ ձիւնապատ կատարներին, որտեղ թագաւո-
րում են արհաւիրքներ՝ իւր ձիւնի զանգուածներով եւ ուր
մեռած կենդանական թագաւորութիւնը տիրում է խորին
գերեզմանական լռութիւն. . . Այդտեղ ազատ շարժվում է
միայն քամին, որը քսուելով կուսական գագաթներին, բարձ-
րացնում է ձիւնի ամպեր, պտտվում է դրանց գլխին, իջ-
նում սառցապատ ձորերը եւ ապա կորչում հեռու եւ հեռու. . .

Ի՞նչ է փնտռում նա եւ ո՞ւր է գնում, յայտնի չէ, բայց
միայն տեղ տեղ լսլիս է նա, տեղ տեղ ուռնում, իսկ տեղ տեղ
ուրախ շիջվացնում անհոգ թռչնիկի նման. . .

Բնածիծաղ նայում է Սղնախը այդ հպարտ լեռնաշղթային
եւ ապա հայեացքը դարձնում իրեն՝ իւր ստորոտին:

Իւր ոտքերի տակ տարածվում է ընդարձակ հովիտը,
մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը կանաչով պատած: Մէկ կող-
մից սփռվում են ամեհի եւ մութ անտառները, իսկ միւս
կողմից հաղողի այգիներն եւ ընդարձակ արօտատեղիներն ու
արտերը, որոնց միջով որորապտոյտ սուսիկ փուսիկ, իսկ տեղ

տեղ գոռալով անցնում է Ալազան գետը. . . Նա էլ անցում է չէ կանգնում, վազում է առաջ, առանց յետ նայելու. . .

Իսկ իւր ոտքերի տակ, արեւելքից արեւմուտք ձգվում են անհամար գիւղեր, որտեղ եռ է գալիս կեանքը, որտեղ ապրում են, արտասույում եւ ուրախանում մարդիկ, սառնամանիքի քամու նման: Տօն օր է: Գիւղական եկեղեցիների զանգակները տալիս են. գիւղացիներից շատերը վազում են դէպի եկեղեցի. իսկ ոմանք շարուել են տեղ տեղ եւ խմում են երկնային տուրքը՝ գինին եւ երգում են «Հարալօ». գրանց ընկերակցում է զուռնայի ձայնը. իսկ քամին մտնում է այդ տեղ էլ եւ դրանց ուրախ «Հարալօյի» ձայնիկների մասնիկները տանում, փախցնում հեռու. . . անգուց Քամի, թող քիչ էլ ուրախանանք, թող քիչ էլ երգենք. . .

Սգնախը անհոգ կերպով նայում է դրանց եւ համեմատում սառնամանիքը այդ եռուն կեանքի հետ, թափահարում է գլուխը եւ ընկնում մտածութեան մէջ: Յանկարծ իւր սրտից հանում է մի խոր հառաչանք եւ ղթափվում՝ այդ հառաչանքը Ս. Կարապետ եկեղեցու մեծ զանգակի ձայնն էր, որ հրաւիրում էր Աստուածաւէր մարդկերանց դէպի եկեղեցի:

Հէնց այդ միջոցին դէպի եկեղեցի շնչասպառ, պատառոտուն շորերի մէջ կաշուում վազում էր մի կին: Նա մրտաւ գաւիթ, ուր կանգնած էին քահանաները, մօտեցաւ նրանց եւ ամօթխածութեամբ դիմեց գործակալին.

— Տէրտէր, ի սէր Աստուծոյ, միջնարդեցէք Ք. աղային, որ իւր վրայ մնացած պարտքը տայ, մենք խեղճ ենք, ոչինչ չունինք, ի՞նչով պէտք է թաղենք իմ մարդուն, ոչ մեռելահացի փող ունիմ եւ ոչ քահանայի:

— Քահանայի մասին ամենեւին հոգ մի տանէք, մենք կրթաղենք նրան ձրի, իսկ մեռելահաց ամենեւին հարկաւոր չէ:

— Ի՞նչ էք հրամայում, տէրտէր, ի՞նչպէս կարելի է


հասակն առած մարդուն առանց մեռելահացի թաղել, միթէ նա երեխայ է:

— Ի՞նչ գիտէք, ես ասում եմ, որ մեռելահաց տալը աւելորդ ծախք է, մանաւանդ քեզ համար, աղօթենք միայն Աստծուն, որ Նա լուսաւորէ հանգուցեալի հոգին, աղօթքով աւելի բան կարող ենք շինել, քան թէ մեռելահաց տալով:

— Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող նրան առանց մեռելահացի թաղել, եթէ դուք չէք ուզում միջնորդել Ք. աղային, որ իւր մօտ եղած մեր փողերը տայ, այն ժամանակ ես ինքս նորից կերթամ նրա ոտքերը կընկնեմ, գուցէ նա խղձայ ինձ:

— Ես միանգամ գնացի նրա մօտ, բայց նա մերժեց ասելով, որ ձեր մարդը իրան ոչ մի կուպէկ չէ տուել. իսկ երկրորդ անգամ գնալս աւելորդ կըլինի:

Մարիամը կնճռեցրեց յօնքերը եւ հեռացաւ քահանայից: Մեռելահաց տալու սովորութիւնը այնքան խոր արմատացած էր նրա հոգու մէջ, որ նա աւելի շուտ ննջեցեալի կենդանանալը կըհաւատար, քան թէ մեռելահաց չըտալը:



Բ.

Կան մարդիկ, որոնք իրենց քրոնքի աշխատանքով են իրենց օրական պարէնը հայթայթում: Իսկ կան մարդիկ, որոնք ուրիշի քրոնքով պալատներ են կառուցում: Վերջին կարգին էր պատկանում Պ. աղան, որը ուրիշի արիւն քրոնքով կառուցել էր շքեղ տներ, այգիներ. նա ամենեւին ուշագրութիւն էլ չէր դարձնում թէ այս ինչ մարդը որին ինքը ճնշել էր, մեռնում էր քաղցածութիւնից:

Պ. . . աղայից ճնշուածներից մէկն էլ Մարիամի մարդն էր, որը երկու տարի շարունակ աշխատում էր նրա տան շինութեան վրայ եւ ոչ մի կոպէկ չէր ստացել իւր վարձատրութեան համար: Մարիամի մարդը՝ ուստայ Սարգիսը հաւատում էր Պ. . . աղայի խօսքերին. նա ինչպէս կարող էր իրան խաբել, չէ որ նա աղայ է. իսկ ինքը մի ուստայ:

Ուստայ Սարգսի մահուանից յետոյ աղան ազատ շունչ քաշեց եւ գլանակը բերանին ձեւելով լայն պատշգամբի վրայ, ինքնահաւան կերպով ասաց.

— Փառք Աստուծոյ, այս էլ մարտեցի:

Եւ այդ էր պատճառը, որ ոչ գործակալի խօսքին լսեց եւ ոչ թշուառ Մարիամի խօսքին. նա նրանց վճռաբար պատասխանեց, թէ ոչ մի կոպէկ պարտ չէ:

Վերոյիշեալ անցքից մի օր յետոյ Նովկրիանի գերեզմանատանը՝ Մարիամի մարդու գերեզմանի վրայ կանգնած էր

մի երիտասարդ քահանայ եւ կատարում էր թաղման կարգ: Վերջացնելով կարգը, քահանան մօտեցրեց Մարիամին աւետարանը համբուրելու: Մարիամը համբուրեց աւետարանը եւ արտասուքը աչքերին դիմեց տէրտէրին.

— Տէրտէր ջան, փող չունիմ, որ քեզ վճարեմ, ներիր ինձ, ես քո պարտքի տակ չեմ մնալ, դեռ մեռելահաց էլ չեմ տուել, ջրատար մարդուս հոգին դեռ կայրուի դժոխքում, մինչ մեռելահաց տալը: Քահանան յօնքերը կիտեց:

— Եթէ ես գիտենայի թէ դու փողի անուն կրտաս, ես առանց քեզ կը թաղէի ուստայ Սարգսին: Մի՛թէ մենք փողի համար պէտք է կատարենք մեր պարտքը. մի՛թէ Քրիստոս մեզ այդ է սովորեցնում, ոչ, դու սխալվում ես. մեզ վրայ այդպէս մի մտածիր. . .

Քահանայի հեռանալուց յետոյ Մարիամը չորեք գերեզմանի վրայ, համբուրեց գերեզմանը եւ ասաց.

— Համբերիր խեղճ մարդ, քո սիրելի աղան կերաւ քո փողերը, բայց ես իմ մատների աշխատանքով քո մեռելահացի հոգսը կըքաշեմ:

Գ.

Այժմ գիշեր է, այն, ես այդ տեսնում եմ, բայց իմ սրբախ մէջ աւելի խոր գիշեր է. այնտեղ շատ մութ է, այնտեղ ցերեկ—լոյս ամենեւին չկայ եւ միշտ մութ է, մութ է եւ խաւար, ան, ի՞նչ լաւ է լոյսը, ինչ քան կարօտ եմ լոյսին, ան, ի՞նչու չեմ տեսնում լոյս. . . Բայց ոչ, ես տեսնում եմ ցերեկները լոյս, բայց չեմ զգում. . . Այսպէս ասում էր Մարիամը նստած խրճիթում եւ ձեռքին գործում էր գուլպա: Դուրսը պարզ եւ թափանձիկ գիշեր էր. լիալուսինը սփռում էր իւր առատ լոյսը, իսկ աստղերը պսպղում էին:

— Բայց ի՞նչու, շարունակեց Մարիամը, հէնց ինձ համար է աշխարհս մութ, մի՞թէ ես մի ձիճուի չափ էլ չկամ. . . մի՞թէ ես հոգի. . .

Մօտիկ պառկած երեխայի լացը ընդհատեց Մարիամի խօսքը:

— Ի՞նչու ես լալիս, Սեգրակ ջան, քնիր հոգիս, քնիր, հիմա կրլուտանայ կերթաս խաղալու:

— Քաղցած եմ, հաց տուր, խաղալ չեմ ուզում:

— Առաւօտը, յետոյ, այժմ քնիր:

— Ա՛յ, մի կտոր հաց տուր, ես շատ քաղցած եմ:

— Ձկայ, հաց չկայ, քնիր:

— Ձեմ քնի, հաց կուզեմ, չէ որ դու ասացիր քնիր յետոյ կրտամ:

— Իէ լաւ, ձայնդ կտրիր, քեզ մի կտոր կրտամ, միայն շուտ կեր, որ եղբայրներդ չտեսնեն: Մայրը վեր կացաւ, որ հաց տայ: Միանուագ մի վերմակի տակից բարձրացան մի քանի գլուխներ:

— Մայրիկ, ինձ էլ հաց տուր:

— Ինձ էլ. . .

— Ինձ էլ. . .

Մայրը մեխուած կանգնեց տեղն ու տեղը:

— Հաց. . . հաց. . . հաց. . . կրկնեցին երեխաները:

Մայրը վերցրեց դուլաբէց շորի մի կապոց, որի միջից հանելով մի փոքրիկ կտոր չոր հաց, կտրատեց եւ տուեց երեխաներին:

— Առէք, էլ չկայ, քնեցէք, վաղը գուլպան կըծախեմ եւ հաց կառնեմ:

Երեխաները միանգամից կուլ տուեցին եւ շուտով կրկին քնեցին:

Մայրը կրկին իւր նախկին գործը սկսեց:

— Հը՛մ. . . հաց տուր, ես որտեղից տամ, գլուխս որ քարին խփեմ. . . որ ցաւին դիմանամ. . . մեռաւ այն ջրատարը եւ այսքան որբերը վզիս թողեց. ի՞նչով կերակրեմ սրբունց, ի՞նչպէս պահպանեմ սրանց: Շուտով կըզայ դաժան ձմեռը, ցուրտն ու բուքը, իսկ մենք չունինք ոչ տուն, ոչ տեղ, ոչ կերակուր. . . Խղձն մեզ Աստուած. . . Բայց արդէն փրչում է առաւօտուայ զեփիւռը, շուտով կըլուսանայ, իսկ ես դեռ աշխատում եմ, տանջւում ու չարչարվում. . . ան երկնային Արարիչ. . . Արդարադատ Աստուած, մինչեւ երբ պիտի կուրացնեմ աչքերս, մինչեւ երբ պիտի մաշեմ մատներս. . .

— Ա՛խ, ջրատար մարդ, ո՛ր ես, ո՞վ է իմանում դու այժմ այրվում ես դժոխքի կրակի մէջ, այժմ տանջում են քեզ ստտանաները իրանց կրակէ շամփուրներով, մաս մաս կտրատում են, հոգիդ սեւ կարէ կարասի մէջ են կոխում ու

Հանում եւ ծիծաղում են ինձ վրայ, որ ես չկարողացայ մեռելահաց տալ: Քեզ թաղեցինք ինչպէս մի երեխայի, հոգիդ էլ փչացաւ, մարմինդ էլ. . . Բայց ես դեռ չեմ մեռել, որդոցս կրծախեմ, ինձ կրտանջեմ եւ քո հոգին կրկրկեմ, կրկանջեմ տէրտէրին գերեզմանիդ վրայ, նորից կարգ կրկատարել տամ եւ մեռելահաց կրտամ, որպէս զի հոգիդ սատանաների ձեռքից ազատուի. . . մեղայ քեզ Տէր Աստուած, ասաց նա եւ արտասուելից երեսը դարձրեց դէպի դուրս. . .

Գուրսը տիրում էր մեռելային լուսթիւն: Քնած էր Սղնախ քաղաքը, քնած էին լեռները, հովիտը, գետը, ամեն ինչ ննջում էր լուսնի ցուրտ ձառագայթների տակ. . .

Մարիամը նայում էր դուրս պղտոր աչքերով եւ մտածում դժոխքի վրայ, ուր այժմ այրվում էր իւր մարդը:

Յանկարծ հեռու՝ ճանապարհի վրայ երեւաց մի ստուեր, որը դանդաղութեամբ ուղղվում էր դէպի Մարիամը: Նա ոտից ցզլուխ վաթաթուած էր սպիտակ սաւանի մէջ, երեսը դժգոյն էր, տխուր եւ յուսահատ. իսկ ձեռքերը խաչաձեւ ծալած էր կրծքին:

Մարիամը յառել էր աչքերը ստուերի վրայ եւ որքան մտնենում էր ստուերը, այնքան կատաղի էին դառնում նրա աչքերը եւ փշաքաղվում մազերը: Յանկարծ նա դուրս վազեց խելագարի նման, գզգզուած մազերով եւ չորեց ստուերի առաջ: Նա ճանաչեց նրան. այդ իւր մարդու ուրուականն էր, որը գերեզմանից դուրս գալով, թափառում էր երկրի վրայ:

— Ներիր. . . ներիր. . . ներիր. — շնջած խեղճ կինը:

Ստուերը դարձրեց իւր մարած աչքերը դէպի կինը եւ դանդաղ, շուտ շուտ հանգստանալով ասաց.

— Հոտոտիր շորերս, ես այժմ գալիս եմ դժոխքի ամենասարսափելի տեղից: Այնտեղ այրում են, խորովում են եւ տանջում են ինձ. . . Մարիամ. . . Մարիամ. . . դու անց ես կացնում օրերը եւ չես մտածում մեռելահաց տալու. . .

— Ես կրկատարեմ. . . կրկատարեմ. . .

— Այո՛, պէտք է կատարես, որպէս զի դադարեն իմ տանջանքները. . . Ո՛հ, զարհուրելի է դժոխքը, այնտեղ պատառոտում են սիրտս, նորից կպցնում, նորից պատառոտում. . . յախտենական կրակի մէջ Հանում են աչքերս, կտրում են լեզուս, քիթս, ականջներս եւ դարձեալ կրակէ ասեղներով կարում. . . ազատիր ինձ. . . ազատիր. . .

«Բո՛ւմ». . . խփեցին յանկարծ Ս. Կարապետ եկեղեցու մեծ զանգը:

— «Երրորդն է». լուսացաւ, ես դարձեալ գնամ դէպի կրակը. . .

— Ո՛հ, մի գնա, սպասիր, կաց ինձ մօտ, գոռաց Մարիամը, բայց ստուերը մի դառն ժպիտ արձակելով դանդաղ հեռացաւ նրանից ասելով.

— Խղճա՛ ինձ. . . խղճա՛ ինձ. . .

Մարիամը ուշաթափ ընկաւ գետին եւ երբ բարձրացրեց գլուխը, ուրուականը այլեւ չէր երեւում: Իսկ արեւելքը արդէն շառագունուել էր:

Արշալոյսը բացվում էր:



Դ.

Լմեալին օրերից մէկն էր:

Թանձր մառախուղը ծածկել էր Սղնախ քաղաքը, ոչինչ բան չէր երեւում, ոչ տուն, ոչ երկինք, ոչ գետինք, ամեն բան ծածկուած էր մառախուղի տակ, որը ձգուել էր մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը եւ ամեն բան ծածկել:

Ծննդեան մեռելոցի երկուշաբթին էր:

Նուկրիանի նոր նշանակուած Ն. . . քահանան տիրացուի հետ միասին շրջում էր Նուկրիանի հայ բնակիչների տներն օրհնելու: Չնայած ձմրան սարսափելի ցրտին, երիտասարդ քահանան ամբողջ օր, առանց հանգստանալու, շրջում էր տներ օրհնելու, վազելով մէկ տնից միւսը:

Սրգէն երեկոյեան ժամը չորսն էր. հետզհետէ սկսում էին վառուել ճրագները. իսկ եզանակը աւելի եւ աւելի ցրտանում էր: Թանձր մառախուղը կամաց կամաց ցրվում էր. փչում էր հիւսիսային սառն քամի, որը բարձրացնելով ձիւնի փոշիներ, զարկում էր մարդկանց երեսին: Երիտասարդ քահանան օրհնելով վերջին տունը, դուրս եկաւ եւ դառնալով տիրացուին ասաց.

— Կարծեմ վերջացրինք, էլ տուն չմնաց օրհնելու, արգէն ժամը չորսն է եւ մենք գեւ մի կտոր հաց բերաններս չենք դրել:

— Այո՛, վերջացրինք, բայց մի տուն էլ մնաց:

— Ո՞րտեղ, ո՞ւմ տունը:

— Մարիամի:

— Ո՞րտեղ է կենում նա:

— Հեռու, բլրի ստորոտին:

— Ո՞ւմ տանը:

— Չգիտեմ, բայց նա տան մէջ չէ կենում, այլ մի մութ խորշում:

— Ի՞նչպէս թէ մութ խորշում:

— Գնանք կիմանանք:

Նրանք առաջ գնացին:

Բուքը հետզհետէ սաստկանում էր, ձիւնի փոշիները խփում էին քահանայի եւ տիրացուի երեսներին, որոնք լուսբարձրանում էին սառցապատ ճանապարհի վրայ:

Տէրտէրը կանգնեց:

— Կարծեմ այն կողմն էլ տուն չկայ, մենք քաղաքի ծայրումն ենք:

— Ո՛չ, գեւ արի, ահա այնտեղ է կենում, ցոյց տուեց տիրացուն մատով:

— Բայց այնտեղ ոչինչ չկայ, բացի մի մութ խորշից, որը լցուել է ձիւնով:

— Կայ, հէնց այդտեղ են կենում:

Նրանք կրկին առաջ գնացին:

Քամին կատաղութեամբ շունչում էր. նա հաւաքում էր ձիւնը ձորերի մէջ եւ սխախտելով վազում առաջ:

Քահանան մի քանի քայլ էլ առաջ գնաց եւ դարձեալ կանգնեց:

— Ո՞ւր ես տանում ինձ, տիրացու, այստեղ մարդ չի կարող բնակուել:

— Չէ, այստեղ են բնակվում, ահա տեսնում ես խորշը, որը ծածկուած է մի քանի սիւներով, ահա հէնց այդ փլուած սիւների տակն են ապրում:

Տէրտէրը մի քանի քայլ էլ առաջ գնաց եւ նրա աչքին երեւեցաւ մի կիսաքանդ տուն, կամ աւելի լաւ է ասել մի խորշ, որի առաստաղը կազմում էր մի քանի սիւներ, որոնց մէկ ծայրը իջեցրած էին գետնին եւ որոնք հողի հետ կազմում էին մի եռանկիւնի:

Տէրտէրը ակամայից երեսը խաչալինքեց եւ մի քանի քայլ էլ առաջ գնաց: Նա արդէն կանգնած էր սենեակի մէջ, որը ոչ դուռն ունէր, ոչ պատուհան եւ ոչ պատեր: Սենեակի հողէ յատակը ծածկուած էր ձիւնով. իսկ մի անկիւնում միտում էր մի փայտի կտոր:

Քահանան շուարած կանգնած էր եւ չգիտէր ինչ անէր. մթութեան մէջ ոչինչ չէր նկատել, երբ յանկարծ անկիւնից բարձրացաւ մի լլար, մաշուած կին, որը ամօթից իւր հագի ցնցոտիներով աշխատում էր ծածկել իւր մերկ մարմինը:

Այդ կնոջ ետեւից հետոջհետէ բարձրացան մի քանի գըլուխներ, որոնք կծկուեցան ումանք մօր փեշերի տակ. իսկ ումանք շարուեցան միտուող փայտի շուրջը: Նրանք երկիւղածութեամբ մէկ կրակին էին նայում, մէկ քահանային:

Տեսարանը սոսկալի էր. մի տեսակ սարսուռ անցաւ քահանայի մարմնով, որ ցնցեց նրա մարմինը:

— Ի՛հ տէրտէր, ի՛նչու ես կանգնել, ասաց տիրացուն:

Քահանան սթափուեց եւ անգիտակցաբար սկսեց.

— Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս... եւ լռեց:

Արտասուքները դուրս ցայտեցան նրա աչքերից եւ աննրկատելի կերպիւ ընկան գետին:

— Տէր հայր, ի՛նչ պատահեցաւ ձեզ, շարունակեցէք, դարձեալ ասաց տիրացուն:

Տէրտէրը նորից սկսեց եւ հազիւ հազ կարողացաւ վերջացնել: Ապա նա մօտեցրեց աւետարանը Մարիամին: Մարիամը համբուրեց եւ դրեց աւետարանի վրայ թղթագրամ:

Քահանան նայեց թղթագրամին եւ սարսափեցաւ: Աւե-

տարանի վրայ դրուած էր երկու հատ երեք բուլբիանոց թղթագրամ:


— Ի՛նչ ես անում, շնջաց քահանան խեղտուած ձայնով, վերցրու... վերցրու...:

— Տէրտէր ջան, ի սէր Աստուծոյ, աւելի չունիմ, դու թաղման կարգն էլ կատարեցիր, ես քեզ շատ եմ պարտական:

— Ո՛հ... տիրացու... ասա վերցնի, չեմ ուզում:

— Այ կնիկ, չե՛ս տեսնում տէրտէրը ինչ գրութեան մէջ է, ի՛նչու ես դրան խեղդում, վերցրու փողը, նա քեզանից փող չէ ուզում, բաշխում է քեզ:

Մարիամը զարմացած նայում էր քահանային. նա վերցրեց փողը եւ սկսեց շնորհակալութիւն յայտնել քահանային: Բայց քահանան շտապով դուրս եկաւ այդ թշուառութեան խորշից եւ համներով տուն սկսեց երկար ժամանակ մտածել « - Բ ի յ շ է ը ի վրայ, ուր ապրում են, մեռնում են եւ շարժվում են մարդիկ: Նա համեմատեց հարուստի կեանքը այդ կեանքի հետ եւ արտասուեց... »





ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.

5884

2013

